№ 71 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼԻ № 71

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS. Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. 20 կօպ., վերջին երեսի վրա՝ 10 կօպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով):

I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին

ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ 1910 Թ.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՕՆՈՒՄ եւ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ

ԲՕԳՈՒՏ

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան եւ Հայոց Դրամատիկական Ընկերութեան

տեղի կունենայ

Soirée monstre:

I. ԹԱՏՐՕՆՈՒՄ

1) „Букетъ“, հեղ. Պոտապենկոյի.
2) „Волшебныя звуки“.
3) „Дорогой поцѣлуй“, հեղ. Բիլիբինի.

Ռեժիսսեօր՝ տ. ՄԱՑՈՒՐԵԱՆ

Մասնակցութեամբ տ. տ. Ե. Գ. Աբելեանի, Ա. Մ. Աթաբէգեանի, Վ. Ե. Մամուլեանի, Մ. Մելիք-Ադամեանի, օր. Փուղինեանի, Ե. Սպանդարեանի, Նազարբեկի և պ. պ. Վ. Ա. Եղեկեանի, Գ. Գափիեանի, Վ. Ա. Կուսիկեանի, Գ. Խատիսեանի, Աբ. Զմշկեանի և ուրիշների:

II. ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ—

Cabaret—բաղկացած 3 բաժանմունքից.

1) Գաբունիա-Ցագարելի—Երգ.
2) Մամիկոնեանց—Կուպլեցներ.
3) Մէյէկ-Հանրյ—Ռեւեիեան պար.
4) Նէվէրովա—Շանսոնետկա.
5) Լոֆուզինի—Շանսոնետկային ձեւացումներ.
6) Նէվէրովա և Լոֆուզինի—«Մաsյоs» պար.
7) Բոսեակ—Կուպլեցներ.

LA CANT ELECTRA

Պտի-շվօ, պօստ, ապրիլի 1-ի սիւրպրիզներ

Ներկայացման սկիզբը երեկ. ժամը 8-ին, իսկ Cabaret-ինը երեկ. ժամը 11-ին:

Ներկայացման տոմսակները վաճառվում են Արտիստական Ընկ. Թատրոնի կասայում:

Ներկայացման համար տոմսակ վերցրած անձերը կարող են ներկայ լինել և Cabaret-ին՝ վճարելով դրա համար 1 ռուբլի, բացի տոմսակի արժէքից:

Cabaret-ի մուտքի վճարը առանձին 2 ռ. 10 կ.:

Cabaret-ին աշակերտուհիներին մուտքն արգելվում է:

Cabaret-ի տոմսակները, նոյնպէս և սեղան ունենալու տոմսակները կը ծախվեն Արտիստական Թատրոնի կասայում այսօր, ապրիլի 1-ին:

(Ե.Հ.) (առ.) 345. 0—3

ԱՆԱԹԷՄԱ

Անաթէման՝ խեղճ ու անճար՝
Դուսն էր բաղխում յաւերժի,
Նա հրեշտակին թող «ЗЕФИРЪ» տար,
—10 հ. 6 կ.

Տեսնէր նորից կը ժերժի՝
Թէկուզ «Казбекъ», «Браво», «Аражсъ»
—10 հ. 3 կ.

Կամ «Деликатныя», «Марсъ» և «Другъ»
—10 հ. 5 կ.

Եւ, անպայման, քաժուց արագ
Բաց կը լինի դուռը вдругъ.

Եթէ Ռոզան ծանօթ լինէր
Մեր «Восходъ»-ին հոտաւէտ,
—10 հ. 5 կ.

Նա չէր թողնի տունն աւեր
Ինքը փախչի ուրիշի հետ:

Այժմ Լէօնիդ Անդրէեվը
Շատ է ծխում մեր «Прима»-ն,
—25 հ. 30 կ.

Եւ գրելու նրա ձեր
Կը լաւանայ անպայման:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ „ԵՂԲ. ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐ“

(Ե. Հ. Կ.) (առ.) 155. 25—23

ԵՍ, ԱՆՆՍ ՉԻԼԼԷՍԳ,

աճեցրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմէտր երկար.) մազերս—որ յիշեցնում է Լօրելէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պօմադայի 14-ամսեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ: Այդ պօմադան ճանաչված է լաւ միջոց մազերը թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արմատների ամրացման: Տղամարդիկ, շնորհիւ այդ պօմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի խակական փայլ: Միևնոյն ժամանակ պօմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ:

Բանկայի գին՝

3 եւ 5 ռուբլի

Գլխաւոր սահմանը՝ Кавказское Т-во Торговли Аптекарскими товарами, Թիֆլիսում, Բազում և Բաթումում:

(Հ. Հ.) 85 (առ.). 25—20

(Հ. ու.)

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ ✦ Ուրբաթ, ապրիլի 2-ին

ՎԵՐՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ

ՐՕԲԵՐՏ ԼԷՆՑԻ—մասնակցութեամբ ԷԼԷՕՆՕՐԱ ԼԷՆՑԻ

Լենցի դուստրը՝ օրիորդ ԶԻՆԱ ԼԷՆՑԻ կերգէ ՅԻԴԱՆԱԿԱՆ ՐՕՄԱՆՍՆԵՐ:

Սկիզբը երեկ. ժամը 8½-ին: Տոմսակները ծախվում են Արքուն. Թատրօնի կասայում: Մանրամասնութիւնները աֆիշներում և ծրագրերներում:

(առ.) 360. 2—1

Հինգշաբթի, ապրիլի 1-ին, երեկ. ժամը 7-ին

ԿՈՎԿԱՍ. ԿԱՅՍԵՐ. ԳԻՒՂԱՏՆՏԵՍ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

կայանալու է

ԹԻՖ. ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ. ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգ.

1) Զեկուցումն ընկ. փոխ-նախագահ Ց. Փիրալեանի՝ «Ցնայնագործ. Համադասարի և իր միսիայի մասին Պետերբուրգում»: 2) Զեկուցումն Տէր-Պողոսեանի՝ «Խոզարուծական փորձեր Դիլիջանի շրջանում»: 3) Զեկուցումն Լ. Աֆրիկեանի՝ «Կանթնամասեական ինտրոկտորական գործունէութիւն Նոր-Բայազէտի շրջանում»: 4) Ընթացիկ հարցեր:

Կարող են ներկայ գտնվել նաև կողմնակի անձինք:

(Չ. հ.) 363. 2—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ

(ՕԲՕՒ)

ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ

ՖԱԲՐԻԿԱՅԻ

8 կ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր փաթեթը (ռուլօ):

Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Գօլովինսկի պր., 21, Արտաս. Ընկ. շինութ.

Տէլէֆօն № 355.

ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ

ՆՄՈՒՇՆԵՐԸ ԶՐԻ

(Հ. ու.) (առ.) 310. 50—1

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.

Երևանեան հրապարակ—Գուշկինսկ. փ., № 1.

(Հ. հ. կ.) (առ.) 1045. 100—79

ԱՆՕԳՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Մամուլը այս օրերս արձանագրեց հետաքրքիր դէպքը:

Զանգեզուրի Շինուհայր գիւղում մի ամբողջ ընտանիք, վարակված վարակաւոր մահաբեր հիւանդութիւնով, սպառնում է վարակել նաև գիւղի միւս ընտանիքները:

Հիւանդ ընտանիքը մնացել է առանց խնամքի: Այն ազգականուհին, որ սիրտ էր արել խնամատարութիւն ցոյց տալ հիւանդներին, ինքն էլ վարակվել է և պառկել:

Հիւանդ ընտանիքից մի քանիսը մեռել են, միւսներն էլ մերձ ի մահ վիճակի մէջ են:

Գիւղացիները սարսափի մէջ են և նրանցից ոչ ոք չէ վստահանում մօտենալ վարակման տեղին:

Նոյնիսկ մեռածներին թաղելու համար դրսից մարդ չէ մօտենում:

Ահա տխուր իրականութեան նկարագիրը:

Իսկ բժիշկնե՞ր:

Նրանք դեռ չեն երևացել գիւղում. իսկ երբ երևան, հաւանական է, որ բոլորովին ուշացած կը լինեն: Հիւանդներից շատերը արդէն գերեզման իջած կը լինեն և վարակված կը լինեն ուրիշ ընտանիքներ շրջակայքում:

Իսկ ի՞նչ է հիւանդութիւնը:

Յայտնի չէ: Տի՞ֆ է բծաւոր թէ՞ մի ուրիշ ախտ—ոչ ոք չը գիտէ: Սպասում են գաւառական բժշկին, որ գնայ նայի, խրատներ ու դեղեր տայ և միջոցներ ձեռք առնի կանգնեցնելու հիւանդութեան տարածումը և ընդարձակումը:

Եւ մի՞թէ զարմանալի կը լինի, եթէ մի քանի ժամանակից յետոյ մենք լսենք, որ գիւղի մեծագոյն մասը ենթարկվել է վարակի ազդեցութեան և վտանգել է իր առողջութիւնը:

Ա.ԼԵՆԱՐՅՈՆ, ոչինչ զարմանալի բան չը կայ այստեղ:

Եւ նախկին դառնագին դէպքերը ցոյց են տալիս, որ այդպիսի մի դրժբաղդութիւն անյայտ չէ մեր երկրին և նա ժամանակ առ ժամանակ հանդէս է գալիս, թշուառութեան ու մահի դուռը գցելով անօգնական և անճար մնացած մարդկանց բազմութիւններ:

Սակաւ՝ են, շատ սակաւ բժիշկները մեր երկրում: Ամբողջ գիւղական շրջանները բոլորովին զուրկ են բժշկական օգնութիւնից, և մի ծանր դէպք պատահած ժամանակ՝ ժողովուրդը մընում է առանց հոգատարութեան, խրատների և բժշկութեան:

Մինչդեռ դժուար չէ ապացուցել, որ շատ և շատ տեղերում ժողովրդական մահացութեան տոկոսը զգալի կերպով կը պակասէր, եթէ բժշկական օգնութիւնը լաւ դրութեան մէջ լինէր: Ժողովրդի աճումը, որ այժմ դադարել է, առաջ կերթար կանոնաւոր կերպով և ժողովրդական առողջութիւնը ապահովված կը լինէր մաշող և քայքայող ազդեցութիւններից:

Ո՞ւմ մեղադրել:

Եթէ մենք ցանկանանք բոլոր մեղը գցել բժշկական այն մարմնի վրա, որ ներկայումս գոյութիւն ունի նահանգում և գաւառում, արդարացի չէինք լինի: Արդարացի չէինք լինի, որովհետև բժիշկների թիւը շատ փոքր է երկրի մէջ և նրանք ֆիզիկապէս անընդունակ են [illegible] օգնութիւնը, որ պասվում է նրանցից:

Պէտք է աւելացնել բժիշկների թիւը և նրանց կապել մի մեծ տեղական կազմակերպութեան մէջ:

Անշուշտ, այդպիսի մի լուրջ գործ ամեն հեղինակութեամբ կարող էր իրականացնել զեմստվոյին տեղական ինքնավարութիւնը, որին տարիներից ի վեր սպասում ենք անհամբեր կերպով:

Բայց քանի որ չը կայ այդ ինքնավարութիւնը, անհրաժեշտ է, որ մի կողմից կառավարութիւնը պետական աջակցութեամբ, միւս կողմից ազգաբնակութիւնը սեփական օժանդակիչ միջոցներով հրաւիրէր բժիշկների և ազատէր ժողովուրդը զոհերից, որոնք կանոնաւոր կեանքի պայմաններում ամենևին տեղի չէին ունենայ:

Ա. Քալանթար

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Սալոնիկ, 30 մարտի

Երէկ Աֆոնում սերբիական թագաւորը դիտեց հինաւուրց եկեղեցիները, Խիլանդարի վանքի գրադարանը, ընդունեց վանքերի պատգամաւորութիւններին, որոնք թանգագին ընծաներ մատուցին:

Իլինի վանքին թագաւորը նուիրեց 16,000 ֆրանկ, բացի դրանից ընծայեց երկու զոհարգարդ խաչ 14,000 ֆրանկ արժողութեան: Վանականները ընծայաբերեցին իրանց ձեռագործներից:

Առ. ժ. 3-ին «Էրթօղրուլ» նաւով ժամանեց Սալոնիկ սերբիական թագաւորը. դիմաւորեցին տեղական վալին և զօրքերի հրամանատարը: Ժամը 9-ին թագաւորը մինիստրներով և շքախմբով շրջապատված ոտք դրեց ցամաք սերբիական հիմնի հնչիւնների տակ և ընդունվեց բարձր իշխանութիւնների, հիւպատոսներից, քաղաքացիական և զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներից և բազմաթիւ ժողովրդից: Թագաւորն անցաւ պատուաւոր պահակախմբի ետևով: Զօրքերը ներկայանալուց յետոյ՝ թագաւորը շքախմբով դիմեց քաղաք կառքով: Ժամը 10 և 15 րոպէին ժողովրդի ուղեկցութեամբ վերադարձաւ նաւահանգիստը, ուր սասպասված էր նախաճաշ: Ժ. 11-ին թագաւորը նստեց թագաւորական գընացքը և ցնծագին ողջոյններով մեկնեց: Նիշում թագաւորին սպասում է դահաժառանգը: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 30 մարտի

Զարիկովը ներկայացաւ գահաժառանգ Եիւսուֆ-Իզէդդինին:

Բոլոր լրագիրները միաբերան գոհունակութիւն են յայտնում կառավարութեան երէկվայ յաղթանակի առիթով:

Բ. Դուռը տեղեկութիւն ստացաւ, որ Պրիշտինում համաձայնութիւն է կապվել զինուորական իշխանութիւնների և ապստամբների ներկայացուցիչների միջև: Ապստամբութիւնը վերջացած է համարվում: Ճիշդ տեղեկութիւններ համաձայնութեան մասին առ այժմ չը կան: Արժանահաւատ լուրերի համաձայն ալբանացիներին խօսք է տրված չը պատժել պարագլուխներին և թոյլ տալ գործածել լատինական այբուբենը դպրոցներում: Ապըստամբվածները վերադարձրել են ձեռք ձգած թնդանօթները: Սակայն մի քանի տեղերում շարժումը շարունակվում է: Միտրովիցայում դեռ հանգիստ չէ: Գուշէ-Աֆ[illegible] մեծ թիւով ալբանացիներ: Հանգստութիւնը վերականգնված կարելի է համարել միայն Պրիշտինում:

Զօրքերի առաքումը դէպի Հիւսիսային Ալբանիա շարունակվում է: Կառավարութիւնը վճռել է զինաթափ անել ազգաբնակութիւնը և Ալբանիայում մշտապէս զօրախմբեր պահել:

(Հ. Գ.)

Վիեննա, 30 մարտի

Իշխան Ալբերտ Կիկան Բուխարէստից ուղարկել է հեռաձայնային յայտարարութիւնը «Նէյէ-Ֆր.-Պրէսսէին». «Ալբանացիները ցանկանում են լիակատարկերի [illegible] Թիւն, բնաւ չեն կուում Աբդիւլ-Համիդի համար. արաբական գրեր մացնելու փորձով երիտասարդ թիւրքերը առիթ տուին ազգային կուի. յեղափոխական շարժումը ուղղակի ենթարկված է ալբանական գերագոյն կոմիտէի կարգադրութիւններին, որի նախագահը ես եմ հանդիսանում»: (Հ. Գ.)

Սալոնիկ, 30 մարտի

Ծովով եկաւ 4 բատալիոն՝ Ալբանիա մեկնելու համար: Կ. Պոլսից ուղարկված զօրամասի հրամանատար նշանակված է Օսման փաշան: Որոշված է Ալբանիա ուղարկել ընդամենը 50 բատալիոն: (Հ. Գ.)

Բէլգրադ, 30 մարտի

Պրիշտին քաղաքը գրաված է արնաուտներից. 200 թիւրք զինուորներ անձնատուր եղան. թիւրք օֆիցէրների և զինուորների դիակները յօշոտված են անճանաչելի կերպով: Նոր զօրահրամանատար Շեվքէթ-Տուրղութ փաշան թեթև վիրաւորված է ալբանացիների հետ կուելու ժամանակ:

Լաբա գիւղի մօտ թիւրքերը կորցրել են համարեա մի ամբողջ բատալիոն: («Ե.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բերլին, 30 մարտի

Լանդտագը սահմանադրութեան հաստատման երկրորդ անգամ քուէարկելով ընտրութիւնների օրինագիծը՝ ընդունեց նրան առանց փոփոխութեան:

(Հ. Գ.)

Մարսէյլ, 30 մարտի

Էլեքտրաքարշի երթևեկութիւնը բոլորովին դադարեց: Համարեա բոլոր խանութները քաղաքի կենտրոնում փակված են:

Սինդիկատների պլատները իրանց յայտարարեցին ընդհանուր գործադուլի կոմիտէ: Գործադուլ արին առևտրական գործակատարները և էլեքտրաքարշի ծառայողները: Շատ գործարաններում աշխատանքները կանգ առան: Վճռական միջոցներ են ձեռք առնված կարգ ու կանոնը պահպանելու: (Հ. Գ.)

Վլադիկավկազ, 30 մարտի

Ստացված տեղեկութիւնների համաձայն, Դզլարի պետական գանձարանը կողոպտող աւազակները յաջողեցան միայն անշան գումար փրշտակել են միայն անշան գումար

շնորհիւ գանձապահ հանգուցեալ Կոպիտկոյի ժրութեան, որ սննկատելի կերպով գանձարկղի բանալին նետում է պատուհանից։ Աւազակները դիրք են բռնել Խասավիւրտի վիճակի խրամատների մէջ և դիմադրում են պաշարած կօզակներին։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 30 մարտի

Զատկին Պետերբուրգում կը գումարվի աջակողմեանների համագումարը միապետական կուսակցութիւններին ի մի միացնելու և Դուսայում ունենալիք տակտիկան պարզելու համար։ («Б.»)

—

Եարօսլավլ, 30 մարտի

Նօբէլը մի հսկայական նախագիծ ներկայացրեց ի հաստատութիւն՝ Ատրախանը Բիբինսկի հետ Վոլգայի միջով՝ մի նաւարատար խողովակով միացնելու մասին։ («Б.»)

—

Պետերբուրգ, 29 մարտի

Սուոլիպինի մօտ տեղի ունեցաւ խնճոյք բացառապէս Դումայի և Խորհրդի անդամների համար։ Օպոզիցիան բացակայում էր։ («Б.»)

—

Պետերբուրգ, 30 մարտի

«Русское Знамя»-ն իր № 71-ում տպված «Սպասում ենք հերքումների» յօդուածի համար տուգանքի ենթարկվեց 500 ռուբլով։ (Հ. Գ.)

—

Ֆլորէնցիա, 30 մարտի

Եկաւ Իզվոլսկին կնոջ հետ։ (Հ. Գ.)

—

Պրօսկուրով, 30 մարտի

Դէրժանում հարուստ Եյգէրի բնակարանը ներս մտան գիշերով հինգ զինեալներ։ Կապելով բոլոր կեցողներին, չարագործները ստիպեցին Եյգէրին բանալ գանձարկղը, որտեղից յափշտակեցին 9000 ր. և 3000 ռուբլու թանգագին իրեր։ (Հ. Գ.)

—

Գագրի, 30 մարտի

Ինժենէր Բէլոբրօդովը աւտոմօբիլների կանոնաւոր երթևեկութիւն հաստատեց Սոչիի և Սուխումի միջև։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թաւրիզ, 30 մարտի

Զուլֆայից եկաւ առաջին ճանապարհորդական աւտոմօբիլ - հանրակառը։ Ամբողջ տարածութիւնը՝ 125 վերստ—մէկ ժամ հանգստանալով—աւտոմօբիլին անցել է 8 ժամում։ Թաւրիզի ճանապարհի վարչութիւնը ընդառաջ գնաց։ (Հ. Գ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ*)

—

«Արօրի» յունվարի և փետրվարի համարներում Ստ. Մալխասեան լեզուաբանական մեծ պաշարով ասպարէզ է իջել ի պաշտպանութիւն «վեվագրութեան», իբրև արժատական դարման՝ ու, ւ և վ տառերի միաժամանակ գործածութիւնից առաջացած շփոթութեան։ Իմ կարծիքով՝ հարցի պարզաբանութեան համար նրա ընտրած գիտական եղանակը միակ յարմարն և կանոնաւորն է, որովհետև լեզուաբանական «վնիռ» արձակելու համար, ինչպէս ասել են և անում են դեռ ոմանք, այլ ևս բաւական չէ «հայկաբան» լինել։ Լեզուպիտութիւնն և մանաւանդ համեմատական լեզուաքննութիւնը՝ մեծ դեր է խաղում մեր այբուբենի ուսումնասիրութեան հարցում, առանձնապէս նրա պատմական կողմի քննութեան ժամանակ։ Մեր նախնիք, կենդանի ճնչման մասին մեզ վկայութիւն և աւանդոյց չեն թողել, որպէսզի կարենայինք այս մասին ապահով կերպով վճիռ տալ։ Այս պատճառով էլ բանասէրները ստիպված են լինում համեմատել մեր բառերն ու գրերն՝ օտար, քոյր լեզուների կամ ընդհանուր հնդեւրոպական նախալեզուի բառերի և նրանց արմատների հետ։ Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր լեզու ոչ միայն օտար բառն, այլ նոյնիսկ ձայնանշանն ընդունում է միշտ վերածելով իր սեփական կազմուածքի պահանջին։ Իսկ ինչ են ասում բանասէրները մեր ւ և վ տառերի մասին,

*) Խորին շնորհակալութեամբ ընդունում եմ մեծարգոյ պ. Աղայանի՝ «Սուրհանդակի» № 7-ում ինձ արած «նուէրը», որով աշխատել է «ուղղագրութեան մասին իմ ունեցած մասնաւոր թերին լրացնել». բայց չեմ կարող միևնոյն ժամանակ զարմանքս չը յայտնել, որ նա՝ այսպիսի զուտ ակադեմական հարցում բոլորովին տ ն տ ե ղ ի ածականներ է ուղղում «ւ»-ականութիւնը չընդունողներին (անունով յիշված են՝ «Արարատ», «Մշակ» և Մխիթարեաններ)։

Լոնդոն, 30 մարտի

Բէյտէրը հաղորդում է, որ պարսկական առաջիկայ փոխառութեան համար Անգլիայի և Ռուսաստանի դրած պայմանների մէջ կայ հետեւեալ համաձայնութիւնը. փոխառութիւնից ստացված դրամների ծախքերի ծրագիրը պէտք է ներկայացվի ռուս-անգլիական յանձնաժողովի քննութեան. ծախքերը պէտք է կատարվեն յանձնաժողովի հսկողութեան ներքոյ, որի մէջ մտնում են ֆինանսների մինիստրի ներկայացուցիչը, չորս պարսիկներ և պարսկական ծառայութեան մէջ գտնվող երկու ֆրանսիացիներ. Անգլիան և Ռուսաստանը պէտք է իրաւունք ունենան—ամեն մի պետութիւն իր շահերի տեսակէտից—մերժել երկաթուղային կօնցէսիաներ. Ռուսաստանը պէտք է կօնցէսիա ստանայ Ուրմիայի լճի վրա նաւադրացութիւն հաստատելու. աւանները ապահովվում են մաքսային տուրքերով. փոխառութեան համար առնվելու է 70%։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 31 մարտի

Երէկ արտաքին գործերի մինիստրը ռուսաց և անգլիական դեսպաններին յանձնեց պաշտօնական մի յայտարարութիւն, որով յայտնվում է, որ կաբինէտը անընդունելի է դատել բոլոր 6 կէտերը, որոնք առաջադրված են Անգլիայից և Ռուսաստանից փոխառութեան պայմանների մասին։ («Б.»)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 23 մարտ

21-ին, կիրակի, կէսօրէ մէկ ժամ առաջ, Պոլիս մտաւ Սերբիայի թագաւորը Ռումելիի երկաթուղիով։ Սուլթանը, դահաժառանգ Եուսուֆ Իզզէդդինի հետ, կայարանին մէջ ընդունեցաւ իր թագաւոր հիւրը։ Ընդունելութեան ծրագիրը է՝ ինչ որ էր Բուլգարիոյ թագաւորին համար. ճամբանեռ՝ նոյն, զինուորական պատիւները՝ նոյն, հիւրանոցը՝ նոյն։

Բայց ոչ նոյն հետաքրքրութիւնը ազդաբնակութեան մէջ Սերբիոյ թագաւորին համար։ Բուլգարիոյ թագաւորին մուտքը՝ Պոլիսը կը դնէր խանդավառութեան մէջ. թիւրքերը այն համոզումը ունէին, թէ երկու ազգերու մէջ կրկնուող թշնամական դէպքերը ալ պիտի դադրէին մշուշապատ հորիզոններ ստեղծելու դրացի սահմաններուն վրայ. ուրիշներ, օրինակ՝ մենք, կը ծափահարէինք մեղի վիճակվից ցեղի մը կանգնումը, կը ծափէինք, Ֆէրդինանդ թագաւորին վրայ, ազատագրուած Բուլգարիան. և այս ամենուն հետ այն առանձին կարեւորութիւնը, որ ունեցաւ ինքը Ֆէրդինանդ, բուլգար ցեղին հետ, մեր աղէտքի օրերուն՝ դէպի մեր ազգութիւնը։

Սերբիոյ թագաւորին համար առանձնապէս հետաքրքրուեցան յոյները առհասարակ. օրեր առաջ Ֆէնէրի պատրիարքարանը ընդունելութեան պատրաստութիւններ տեսաւ. կրօնակցութիւն և մշակուած բարեկամութիւն կը շոյեն յունական փառասիրութիւնը։ Յոյն թերթեր, գրեթէ առանց բացառութեան, յատուկ ուղղագրեր գրեցին, անուշ խօսքերով, փաղաքշական ոճով. օրինակ մը ըլլալու համար՝ կը թարգմանեմ հետեւեալը «Stamboul» ֆրանս. թերթէն, «Պրօտօս» յոյն թերթի ուղղագրը.

«Կողջունենք քեզ և կընդունինք, ով թագաւորդ ազնիւ և արի սիրը ազգին, անխառն զգացումներով և անկեղծութեան խանդով։

«Կողջունենք քեզ ոչ թէ իբրև թագաւորը բարեկամ ազգի մը, այլ իբրև ազնիւ մարդ մը և մեծ հայրենասէր մը, որ արժանի է դրաւելու մեծարանքն ու սէրը օրքան իր հայրենակիցներու և հպատակներու, նոյնքան օտարներու և ամեն քաղաքի քաղաքացիներու։

«Բայց մայր-եկեղեցին համար ունեցած մեծարանքդ է որ քեզի կընծայէ աւելի շուք մը, որովհետև կը հանդիսանաս իբրև թագաւոր մը, որ օրթոդոքսութեան կեդրոնին կը բերէ իր կրօնքին ու անկեղծ մեծարանքին հարկը։

«Բարով եկար, ով թագաւոր սիրը եղբայրներու»։

«Աստրապի» կը գրէ.

«Քաղաքներու թագուհին երէկ ընդունեցաւ պաշտօնական այցելութիւնը, որ Պիէր I թագաւորը տուաւ վեհ. սուլթանի, դերդուած շատ աւելի ցայտուն համակրանքով մը, քան նախընթաց այցելութիւնը *), որու համար մայրաքաղաքի օրթոդոքս բընակչութիւնը (անշուշտ յոյները ըսել կուզէ) ցոյց տուաւ առաջուց ծրագրուած վերապահութիւն մը և ցուրտ անտարբերութիւն մը։

«Բնաւ զարմանալի չէ, որ Պիէր թագաւորին այցելութիւնը դաշնագրական ամեն ձեւականութիւններէ դուրս եղած ըլլայ, և յոյն ընակչութիւնը մասնաւորաբար ջերմագոյնս բարի գալուստ մաղթէ Սերբիոյ թագաւորին»։

Մեր թերթերը կարձանագրեն օրուան եղելութիւնները. թիւրք թերթերը բարեկամական սիւնակներ կը լեցնեն, առանց պէտք ունենալու այն յայտնի խորհրդածութեանց, որ ամեն օր գրուեցան Ֆէրդինանդ թագաւորին այցելութեանը ըստ

«Stamboul» կողջունէ Սերբիոյ թագաւորը թէ իբրև հիւր մը թիւրքիոյ և թէ այն համակրանքին համար, որ ունի ան Ֆրանսայի համար։ Սերբիոյ թագաւորը, պարիզեան նախկին ուսանող, 1870-ին մը տած է Ֆրանս. բանակին մէջ՝ զինքն որդեգրող հայրենիքը պաշտպանելու. կուռեցաւ Օրլէանի պատերուն ներքև, ու իր համշերակը (cousin-germain), Ս. Լուսի լիսէին ուսանող, մեռաւ դիւցազնական մահով. Պիէսը դիպուածով ազատած է, գնդակները միայն իր պատմուճանը ծակծկած էին։ Villersexelt-ի ճակատամարտէն ետքը՝ կուիւի դաշտին վրայ ստացաւ պատուի խաչը (La croix d'honneur). այդ խաչը, որ մեծ ժողովներու մէջ՝ կը վառ երևի նշանակ քաջութեան։

Այսօր Պերա տօնի մէջ է. մեծ վաճառատունները, գլխաւոր շէնքերը զարդարուած են դրօշակներով, բազմութիւնը շարք շարք կեցած ճամբաներու վրա կը սպասէ ողջունելու Սերբիոյ թագաւորին։

Ամենէն սիրուն տեսարանը կը պարզէ զինուորներու անցքը. ժանտաւոր ուշադրութեամբ մը, կարծես, Պոլիս բերուած են թիւրք բանակին ամենէն առոյգ զօրագունդերը, մաքուր հագուած։ Սահմանադրութենէ ասդին՝ ամենէն աւելի զգալի եղած է զինուորական բարեկարգութիւնը, որ մուտ գտած է բանակին մէջ, մինչդեռ առաջ՝ սուլթանին առանձնաշնորհեալներն էին միայն Ելդըզի զօրախումբերը, որոնք կը վայելէին ամեն շնորհ, ամեն դիւրութիւն։

Թղթակիցներ, թերթերու լեզուորները, հև ի հև չեն հոգներ օրուան լուրերուն. ամեն ոք համոզուած է, թէ քաղաքական մեծ հարցեր չեն շրջապատեր Սերբիոյ թագաւորը, մանաւանդ որ Ֆէրդինանդի այցէն ու մեկնումէն ետքը դեռ չփոխուեցաւ սահմանագլուխի լուրերուն հանգամանքը։

Երէկ առնուած լուրերը դարձեալ խառն են գնդակներով և յարձակումներով։ Պաշտօնական Բուլգարիան կը փութայ հաւաստիքներ տալ, թէ այդ գնդակներն ու բաղխումները չպիտի զօրեն քաղաքական մեծ հորիզոններ ստեղծելու։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մաքրավանք գ. (Երևան. ն.), 12 մարտի

Մեր գիւղի ազգաբնակութիւնը բարիս բուն իմաստով անդրջրհեղեղեան շրջանում է ապրում՝ կրթական, բարոյական և հասարակական յարաբերութեան տեսակէտից։ Եւ այդ ունի իր բնորոշ պատճառները։

Ո՞վ չէ լսել գիւղական կուլակների մասին, ում յայտնի չէ զանազան ցեց վաշխառուների, աղանների, գալամանների գործած չարիքները։ Եւ հենց մեզնում էլ տգէտ ու անճար բանչպարը՝ շնորհիւ իր անհետաքրքիր ու անտարբեր բնաւորութեան՝ իր բովանդակ էութեամբ զոհ է վերոյիշեալ պնակալէզ բռնակալների կամքին, որոնք հասարակական ամեն գործ իրանց ձեռքն առնելով—էլ չենք շեշտում թէ ինչ ճանապարհներով—սեր գլխի տէրն ու տնօրէնն են հանդիսանում, վարելով այդ գործերը ըստ իրանց բարեհայեցողութեան։

Մօտ 200 տուն ունեցող մեր գիւղը ոչ ուսումնարան ունի, ոչ գր.-ընթերցարան և ոչ էլ կուլտուրական այլ հաստատութիւն։

Մեր վաշխառուների համար ձեռնտու չէ, որ գիւղացին ուսում ստանայ, որովհետև այդպիսով հասարակ գիւղացին խելահասու կը լինի իր չարին ու բարիին, իսկ դրա անմիջական հետեւանքը կը լինի այն, որ վաշխառուները կը զրկվեն հեշտ կերպով և ուրիշի հաշուով չաղանալու միջոցից։

Այդ էր պատճառը, որ անցեալ երկու տարիներում Ա. Աֆրիկեանի առաջարկութիւնը՝ ուսուցիչ ուղարկելու և ուսումնարան բացելու համար՝ մեր գիւղացիների (իմա տղրուկների) կողմից ընդունեցաւ դիմադրութիւն։ Ինչպէս ասում են՝ ինչ ասես ասեցին։ Ամենից առաջ՝ ասեցին՝ ինչ է դա՝ ինչ ուսումնարան, ինչ ուսուցիչ, ինչ գրագիտութիւն, ինչ դրամ։ Ինչ ասեցին՝ ասեցին։ Ամենից ետքը՝ ասեցին՝ ամենէն աւելի զգալի եղած է զինուորական բարեկարգութիւնը, որ մուտ գտած է բանակին մէջ, մինչդեռ առաջ՝ սուլթանին առանձնաշնորհեալներն էին միայն Ելդըզի զօրախումբերը, որոնք կը վայելէին ամեն շնորհ, ամեն դիւրութիւն։

Թղթակիցներ, թերթերու լեզուորները, հև ի հև չեն հոգներ օրուան լուրերուն. ամեն ոք համոզուած է, թէ քաղաքական մեծ հարցեր չեն շրջապատեր Սերբիոյ թագաւորը, մանաւանդ որ Ֆէրդինանդի այցէն ու մեկնումէն ետքը դեռ չփոխուեցաւ սահմանագլուխի լուրերուն հանգամանքը։

Երէկ առնուած լուրերը դարձեալ խառն են գնդակներով և յարձակումներով։ Պաշտօնական Բուլգարիան կը փութայ հաւաստիքներ տալ, թէ այդ գնդակներն ու բաղխումները չպիտի զօրեն քաղաքական մեծ հորիզոններ ստեղծելու։ Շահէն

*) Անկարկութիւն Բուլգարիոյ թագաւորին այցելութեանը, որ հանելի երևցած չէ թերթին։

թէ ւ և թէ վ։ Բայց անկասկած՝ հայերէն այբուբենը կազմելու ժամանակ ւ և վ ճիշդ միևնոյն ձայնն և պաշտօնը չէին կարող ունենալ, այլապէս պէտք չէր լինի վ տառն ևս մացնել, բայց ւ տառն որոշ տեղերում այնքան նման է եղել վ-ին, որ այնուհետև և մինչև հիմա մէկը փոխանակել է միւսը և շփոթութեան առիթ տուել։ Նոյնիսկ վ, որի հնչումը կարծում ենք թէ միշտ նոյնն է, ուր որ նա երևայ, երբեմն տարօրինակ դիրք է բռնել, այն է՝ գրվել է, բայց չէ հնչվել, անշուշտ՝ այն ժամանակ, երբ նա փոխարինել է մի օտար հնչիւն։ Օրինակի համար Սիոնը, ովսաննա, Սագովկ և այլն բառերի մէջ ով գրվել է օտար երկար օ=Օ-ի փոխարէն, որի մէջ վ ձայն չը կայ։ (Տես «Այբբենարանութիւն», Վիէննա, 1885, էջ 502)։

Ստ. Մալխասեան ասում է, թէ «երբ կարգով գրում ենք մեր գրերը... և նրանց տակ դարձեալ կարգով գրում ենք յունական այբուբենի գրերը, տեսնում ենք, որ հայերէն ւ-ը զուգադիպում է իւպսիլոնին, իսկ իւպսիլոնը (u նուրը) անտարակոյս ձայնաւոր տառ է»։ Մեր այբուբենը շատ աւելի ճոխ է, քան յունականը։ Մեր լեզուի հնչումներին բաւականութիւն տալու համար Մեսրոպ կամ մի այլ անձ՝ ստիպված էր հնարել կամ փոխ առնել ուրիշ տառեր ևս, որոնք յունականում բոլորովին չը կային և չը կան (ը, ժ, յ, շ, չ... 15 տառ)։ Այդ պատճառով մենք պէտք է վերցնենք մեր այբուբենի սկիզբն և վերջն, որպէսզի ւ, վ, ք տառերը զուգադիպեն իւպսիլոն և ֆի, իսկ յունական տառերին։ Մեր այբուբենի յունականի վրա ձևված լինելը նոր տեսութիւն չէ։ Դեռ ևս անցեալ XIX դարի առաջին կէսին վիէննական Մխիթարեան դպրոցն՝ երբ վերականգնեց Ոսկեդարի հարազատ հայերէնը (Մեսրոպեան լեզու), ջանաց միևնոյն ժամանակ կենդանացնել և տարածել ուղղագրութիւնն բաս յունականին, բայց նա չը գտաւ ընդհանուր հաւանութիւն և ստիպված եղաւ չը շարունակել այն ուղղագրութեան ձևը։ Այդպիսի վախճան է սպասում, բայց շատ աւելի շուտ, եթէ որևիցէ մէկն ապագայում, Ստ. Մալխասեանի թելադրութեան համաձայն, փորձէ կենդանացնել ւ=իւպսիլոն=ֆրանս. u հնչումն և գրէ Հւգo, Դիմա, փոխանակ Հիւգo, Դիւմա։ Ստ. Մալխասեանց շատ լաւ գիտէ, որ 1) մեր նախնիք յունական իւպսիլոնի դիմաց միշտ ւ չեն գրել, այլ գործ են ածել նաև ս (ասորի բառի մէջ), նաև ե (բիւրեղ, Բաբելոն), նաև ի (Կիպրոս), չը յիշելով դեռ գլխաւորը՝ իւ-ը (C. Brockelmann, «Յուն. փոխառեալ բառեր», 1894 և 2) նոյնիսկ յունարէնի մէջ նախկին իւ=իւպսիլիոնը վաղուց իր ձայնը փոխել է և հնչվում է ի, կոչվելով իպսիլոն (ի փսիլոն, առանձին-առանձին, այսինքն լերկ ի), ինչպէս փոխել են և ուրիշ յունական տառեր (օրինակի համար նախկին բէտա=բ-ն այժմ կոչվում է վիտա և հնչվում է վ)։ Ուրեմն մենք պիտի վերանորոգենք ւ=իւպսիլոն հնչումը Հւգo, Դիմա գրելով։ Մեր ւ-ի երկդիմութիւնը կայ նաև յունարէնի մէջ։ Օրինակի համար՝ յունական աւտո=auto (ինքն) խօսքը, որ գրվում է իպսիլոնով, յոյները հնչում են թէ աւտօ (ռուս. ayto) և թէ աւելի յաճախ ընդհանրապէս աֆտօ (կամ , ավտо)։ Բայց ուղղագրութիւնը պահում են միշտ միևնոյնը, աւանդականը։ Այդ միևնոյն auto-ն է, որ ֆրանսիացիք ընդունելով իրանց լեզուում հնչում են «օտо» (օտօմօբիլ=automobile), իսկ ռուսները՝ «ավտо» (ավտոմոբիլ =автомобиль)։

Երկու խօսք էլ արաբական վավ-ի մասին, որը թէ բաղաձայն է և թէ ձայնաւոր։ Վավ-ն երբ էլիֆ տառից յետոյ է գրվում, թէ «էվ» է կարդացվում (ուրեմն բաղաձայն) և թէ ու կամ օ (ուրեմն ձայնաւոր), նայելով թէ ինչ ձայնանիշ է կրում իր վրա։ Իսկ երբ դեռ այս ձայնանիշը (արաբերէն՝ հարէքէ) դեռ չէր հնարված, նրա արտասանութիւնն էլ ամեն տեղ անշուշտ տարբերվում էր։ Այժմ էլ արաբերէն տառերով գրված են բառը. որ նշանակում է «նոր», թէհրանում կարդում են նօ, իսկ Կ. Պոլսում նեվ։ Նոյն վավ-ը բառի մէջտեղը կամ վերջը երբեմն վ է, երբեմն ու, էօ, օ։ Համաձայն եմ Ստ. Մալխասեանի հետ թէ դա՝ պոկասութիւն է մի լեզուի կամ նրա այբուբենի համար։ Բայց ինչպէս որ ւ-ի ենթադրական սեփական (վավ-ից) ծագումն իրաւունք չէ տալիս Ղ. Աղայանին՝ ու-ն փոխարինել ւ-ով, այնպէս էլ ւ-ի՝ իւպսիլոնին համազօր լինելը Ստ. Մալխասեանի համար բաւականաչափ փաստ չէ կարող լինել ւ-ն արտաքսել և նրա տեղ վ-ն տիրապետող դարձնել։ Լեզուի վրա իսկական իշխողը կամ, ինչպէս ֆրանսիացիք ասում են, լեզուի թագաւորը՝ սովորութիւնն է (l'usage est le roi de la langue)։

Հայկական այբուբենի գիւտից յետոյ, մանաւանդ միջին և ստորին դարերում, դատելով մեր ձեռքը հասած ամենօրեայ կամ ամենատարեան գրուածքներից, ուղղագրութիւնը բազմաթիւ կերպարանափոխութիւններ է կրել։ Ստ. Մալխասեան յիշում է, թէ մենք Ժ.Ա. դարերից սկսած պատահում ենք վ-ով գրութիւնների. «Թվիս», «Դավթի», «անվանի». ուրեմն և նորութիւն չէ այժմեան՝ «Արօրի» ընդունած վեվագրութիւնը։ Բայց նա մոռանում է յիշել, որ «ւ»-ով գրութիւնն ևս նոյնքան հին է։ Մեզ հասած ձեռագիրների մէջ, խառնիխուռն, գրվել է թէ «հիւանդ» և թէ «հիվանդ, թէ «թուել», թէ «թվել» և թէ «թվել»։ Բազմաթիւ օրինակներ կան այս տեսակ խառն գրութեան («Հետազօտութիւնք նախնեաց ամենօրէնին վրայ», հ. Դ. վ. Յովնանեան, Վիէննա, Մխիթ. դպ.)։ Այս խառն ձևն անշուշտ աւելի էլ հին է, քան Ժ.Ա. դարը, բայց մենք այդ դարից առաջ միայն գրաբար մատենագրութիւն ունենք, որի տիրող ընդհանուր ձևն է ու աւանդական ուղղագրութիւնը։ Խառնաշփոթ գրութիւն ամենից աւելի մենք ունեցել ենք կիլիկեան իշխանութեան ժամանակ, բայց նոյնիսկ մեր թագաւորների «վ»-ով—«թագվոր»—

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՎԱՍԱԿԻ

Պատմական Հեգիզբարբ. Ցնցն. Սասնոյ վիպերգ

«Ազգ» № 66-ի հետ Ս. Փաստաքարի Հայ Գրական Ընկերութեան հրատարակութիւնն է։ Ընդարձակ է։ Գրուած է գեղեցիկ։ Ունի 6000 տող։ Գրիչ Ս. Ալիշանի։ Գրուած է 1860-ական թուականներուն։ Ունի 20,000 տող։ Գրուած է Ալիշանի ամենամեծ գրութիւնը։ Ունի 19-դ. ցեղ. քարը 1-ի օրինակը։ Գրիչ Ալիշանի։ Գրուած է 1860-ական թուականներուն։ Ունի 6000 տող։

Մեր ընթերցողներուն ներկայացնենք մեր գրքերուն մասին։ Ամենամեծ գրքերուն մասին։ Ամենամեծ գրքերուն մասին։ Ամենամեծ

նօթացնի իր անդամներին այն փորձերի հետ, որ նա մտադիր է անել մեր երկրի զանազան մասերում ամառվայ ընթացքում։ Փիրալեան կը զեկուցանէ իր ճանապարհորդութեան մասին, որ կատարել էր փետրվար ամսին, գնալով Պետերբուրգ և մասնակցելով անայնագործական համագումարին։ Նիստը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում։ Կարող են ներկայ լինել կողմնակի անձեր։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլ տուեց Մողնու եկեղեցու միաբան Վարդան քահ. Տէր-Ղևոնդեանին ապրիլի 6-ին Թիֆլիսի Արքունական թատրոնում ներկայացում կազմակերպել հայերէն լեզուով Գայիանեան դպրոցի օգտին։

◆ Մենք տացանք թոշակարկղի կանոնադրութիւնը, որ մշակվել է Թիֆլիսի Բանդաքային Կրեդիտային Ընկերութեան ծառայողների օգնութեան համար։ Դրամարկղը նպատակ ունի թոշակներ սահմանել ծառայողների, իսկ նրանց մահից յետոյ նրանց ընտանիքների համար։ Կանոնադրութեան մէջ նախատեսված է նաև այն հանգամանքը, որ եթէ դրամարկղի միջոցները բաւական չեղան իր տարեկան ծախքերը ապահովելու, պակասորդը պէտք է լրացվի Կրեդիտային Ընկերութեան ընդհանուր միջոցներից։ Կանոնադրութիւնը դեռ կրում է ծրագրի բնաւորութիւն։ Վերջնական հաւանութիւն ստանալուց յետոյ նա կուղարկվի հաստատութեան և այնուհետև կը սկսի գործադրվել կանոնի մէջ։

◆ Մարտի 31-ին, առ. ժ. 5-ին, կախաղան բարձրացրին 75-ամեայ Յ. Պետրոսեանին, որ մեղադրվում էր շտաբս-կապիտան Տօկրատովարովի սպանութեան և նրա քաղաքացիական կին Միխայլովայի կանոնի դէմ մահափորձ կատարելու մէջ։

◆ Ցիշեցնում ենք, որ այսօր Արփիստական թատրոնում և դահլիճներում տեղի է ունենալու առաջին անգամ շատ հետաքրքրական երեկոյթ-ներկայացում յօգուտ եբրայական երեկոյթ-ներկայացում յօգուտ Եբրայական ու Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան և Դրամատիքական Ընկերութեան։ Ցանկալի է, որ հասարակութիւնը շտապէր այս երեկոյեան լցնելու թատրոնը, որով խրախուսված կը լինի այն գովելի միտքը, որ աւելի լաւ է բարեգործական ու կուլտուրական այլ հաստատութիւններին միանալ և մի երեկոյթ-ներկայացում տալ, քան բարեգործական նպատակներով բազմաթիւ երեկոյթներ-ներկայացումներ տալ առանձին-առանձին, որ միմիայն ձանձրոյթ և յոգնութիւն է պատճառում հասարակութեան։ Բացի հետաքրքրական ներկայացումից մի նորութիւն է մեզ համար երեկոյթ-կաբարէ։ Թատրոնի տոմսակ ունեցողները պէտք է տոմսակները պահեն մինչև ներկայացման վերջը, և եթէ կամենան անցնել դահլիճը, թատրոնական տոմսակը ներկայացնելիս տալու են լրացուցիչ վճար 1 ռուբլի։ Իսկ ով որ ցանկանում է ունենալ սեղանատանը առանձին սեղան, պէտք է նախօրօք գրվի սեղանատան ցուցակում՝ առանձին վճար տալով։

◆ Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութիւնը դիմել է Ամենայն Հայոց Վեհափառ. Կաթողիկոսին խնդրելով թոյլ տալ հայ-լուսաւորչական եկեղեցիներում հանգանակութիւն անել Աբասթումանի սանատորիայի համար։ Ցիշալ ընկերութիւնը տպագրում է Աբասթումանի տեղագրութիւնը պատկերներով։

◆ Վրաստանի եկեղեցի Ինոկէնտի արքեպիսկոպոսը, զիջելով Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութեան վարչութեան խնդիրքին, թոյլ տուեց «Քօվինայի» շաբթի կիրակի օրը եկեղեցիներում գանձանակ պատեցնել Աբասթումանում կառուցվելիք սանատորիայի միջոցները շատացնելու համար։

◆ Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան ստացած տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիսի, Բօրչալուի և Թէլաւի գաւառների զանազան տեղերում հացաբոյսը լաւ է աճել։

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրեց Կովկասի բեմերի վրա խաղալ «Տաիս» դրաման, հայերէն, որ Ա. Ֆրանսի վէպից պիէսի է վերածել Վ. Տէր-Ղևոնդեանը։

◆ Քաղաքային վարչութիւնը հրաւէր է կարդում ցանկացողներին՝ յանձն առնել 4 աւտօմօբիլների կանոնաւոր երթևեկութիւն հաստատել Երևանեան հրապարակի և Ֆունիկուլէրի ստորին կայարանի միջև։

◆ Թիֆլիսի անօնիմ ընկերութիւնը մի նախագիծ է պատրաստում քաղաքի էլեքտրական լուսաւորութեան մասին։

◆ Խօսում են, որ էլեքտրաքարշի վերատեսուչ Բատայլը այլ ևս չի վերադառնայ իր պաշտօնին։

◆ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան խորհուրդը դիմեց երկրագործութեան գլխաւոր վարչութեան Կովկասի լիազօրին, խնդրելով պաշտպանել ընկերութեան միջնորդութիւնը երկրագործութեան գլխաւոր վարչութեան առաջ՝ ընկերութեանը կից երկու աւազ և չորս կրասեր մասնագէտների և ութ ինստրուկտորների պաշտօն հաստատելու մասին ազգաբնակութեանը դաշտային մշակութեան օգնութիւն ցոյց տալու համար։ Բացի դրանից ընկերութեան խորհուրդը խնդրում է լիազօրից մի խորհրդակցութիւն գումարել մասնագէտներից դաշտային մշակութեան գործի կազմակերպութեան և նախահաշիվ պատրաստութեան համար։

◆ Վաղը Բժշկական Ընկերութեան շրջանի մէջ, եր. ժ. 8-ին, նշանակված է աղքատ ուսանողներին օգնող ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

◆ Ապրիլի 4-ին Երևօլովայեվը Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ դասախօսութիւն կը կարդայ յօգուտ ժողովրդական համալսարանի։

◆ Բժ. Սօբոլէվսկիի դասախօսութիւնը ապրիլի 9-ից յետաձգվում է 11-ին։

◆ Պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի նոր հոյակապ շինութեան օծումը և օրհնութիւնը, արգելափիթ հանգամանքների պատճառով, ապրիլից յետաձգվում է մայիսի վերջերին։

◆ Թիֆլիսի գումայի իրաւասուների մի խումբ որոշել է ոսկէ ժէտոն նուիրաբերել Ա. Ֆ. Փրիդօնեանին՝ 35 տարի քաղաքային իրաւասու լինելու առիթով։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Թիֆլիսեցիներ Մ. Յովհաննիսեան և Մ. Զիկօվանի հացթիների սեղանի կանոնները խախտելու համար ենթարկվում են՝ առաջինը 50 ռ., երկրորդը 200 ռ. տուգանքի, և Զամզամ-բէկ կօբուլովը ոստիկանութեան պաշտօնեային վիրաւորելու համար—100 ռ. տուգանքի։

◆ Միքայէլեան հիւանդանոցի հաշուից տեսնում ենք, որ առ 1-ն յունվարի 1909 թ. հիւանդ պառկած են եղել 312 հիւանդներ։ Այդ տարում մտել են 2924 հիւանդ, առողջացել են 2375-ը, մեռել են 563 հոգի և առ 1-ն յունվարի 1910 թ. կային 298 հիւանդներ։ Օգնութիւն է հասցված 2679 հիւանդների։ Տեղ չը լինելու պատճառով հիւանդանոցը մերժել է տարվայ ընթացքում 8591 հիւանդների, որոնցից 5703-ը տղամարդիկ են եղել, իսկ 2888-ը՝ կանայք։

◆ Ապրիլի 4-ին Պավլովը Արքունական թատրոնում կը դասախօսէ «Էֆիր և նիւթ» թեմայով՝ յօգուտ 3-րդ արական գիմնազիայի շինութեան։

◆ Մարտի 29-ին Բագուում, գումայի դահլիճում, Բագուի նահանգապետ Ալիշէվսկիի նախագահութեամբ և նաւթարդիւնաբերողների, իրաւասուների և վարչութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ տեղի է ունեցել Բագուի նահանգում զէմստվոմ մտցնելու առիթով խորհրդակցութիւն։

◆ Սուրբանում մարտի 28-ին Բագուի նաւթային ընկերութեան նաւթահանքում խփել է բաւական ուժեղ ֆոնտան, որ օրվայ ընթացքում կարողացել է տալ 200 հազար պուդ նաւթ։ Ֆոնտանը կանգ է առել։

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

◆ Եկեղեց. հոգաբարձութիւնը երեք շաբաթ իրար վրա տպագրված թռուցիկներով ծխականներին ժողովի հրաւիրեց եկեղեցու ու դպրոցի տարեկան հաշիւները լսելու և քննելու, նոյնպէս և դպրոցապատկան տեղից մի մասը վաճառելու մասին մտքերի փոխանակութիւններ կատարելու համար։ Ոչ մի ժողով էլ չը կայացաւ ծխականների չը գալու պատճառով։ Այժմ՝ կանոնադրութեան տրամադրութեան համեմատ՝ նոյն խնդիրների համար ժողովի հրաւէրներ է կարդում գործակալը, իբրև տեղական հոգ. իշխանութիւն։ Եթէ այս անգամ էլ ծխականները անտարբեր մնան, խնդիրների լուծումը կանցնի թեմ. հոգ. իշխանութեանը։ Որքան և ցաւալի, արգահատելի ու ամօթաբեր լինի այս հանգամանքը, այնուամենայնիւ եղելութիւն է այն և լաւ վկայական մեր ժողովրդի հասունութեան։

◆ Մարտի 28-ին, տեղիս ս. Փրկիչ եկեղեցում մեծ հանդիսով կարդացվեց հայրապետական անդրանիկ կոնդակը։ Պատարագի ժամանակ խորանից դուրս բերեցին խաչով, խաչվառով, կերոններով ու քշոցներով գեղանկար փառաւոր կոնդակը «Հրաշափառ» որոտալով, որ երգում էր Արդուինի Յովհաննէս քահանան։ Այդ ժամանակ սեղանի վարագոյրը բացվեց և կոնդակը բազմաթիւ ժողովրդի միջով ի տես ամենի բարձր բռնած՝ հ. Մելեան հանեց բեմ և բռնեց ի ցոյց հետաքրքրվող աղօթաւորների։ Այդ ժամանակ թնդաց «Էջմիածին ի Հօրէ» շարականը, որից յետոյ հ. Մելեան կարդաց պարզ առողջութեամբ ու զգուշացված տոնով, որին խիստ ուշադրութեամբ լսում էր ժողովուրդը։ Կոնդակի ընթերցումից յետոյ հ. Մելեան բացատրեց Վեհ. Հայրապետի օրհնութեան ու յորդորի հիմնական իմաստը՝ առանձնապէս շեշտելով հայ ընտանիքի ու եկեղեցու նշանակութիւնը։ Ապա փակվեց վարագոյրը և սկսվեց ընդհատված պատարագը։ Դպրութիւն էր անում ծխ. դպրոցի աշակերտական խումբը։

◆ Այսօր 25-ին, տեղիս հայ կաթոլիկների նորաշէն դպրոցի մէջ նշանակված էր Կով. Հ. Բ. Ընկ. Բաթումի տեղական վարչութեան ընդհ. ժողովը, որ չը կայացաւ անդամների չը հաւաքվելու պատճառով։ Պէտք է նկատել, որ հասարակութիւնը առանձին հետաքրքրութիւն չէ ցոյց տալիս նաև դէպի այդ հաստատութիւնը։ Վճարող անդամների թիւը շատ քիչ է։ Անցեալ տարվայ բացած արհեստագիտական դպրոցն էլ փակված է։ Գլխաւոր գործունէութիւնը կենտրօնացած է աղքատների, ճամբորդների, հիւանդների ու չքաւոր աշակերտների նպաստ ու օգնութիւն հասցնելու վրա։ Այս սահմանումն էլ ներկայումս միջոցները սպառված են։ Մեր քաղաքը ներկայումս գտնվում է նիւթական մեծ տագնապի մէջ։ առևտուրն ընկած է. ուտեստի մթերքները սաստիկ թանգացած, ազգաբնակութիւնը խիստ նեղութեան մէջ է։

◆ Այսօր 25-ին, ֆրանսիական շոգենաւային Մէսսաժերի-Մարիթիմ ընկերութեան «Դանուբ» շոգենաւով մեկնեց դէպի կ. Պոլիս Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ նորաձած Եղիշէ եպիսկոպոս Չիլինկիրեան, տանելով իր հետ հայրապետական օրհնութեան անդրանիկ կոնդակները թիւրքահայ թեմերի անուններով։

◆ Ինչպէս վերջնական հաշիւներից պարզվում է, յօգուտ տեղական հայ ծխ. դպրոցների Վարդանանց տօնին տրված «Հայկական երեկոյթից» զուտ օգուտ մնում է 1500 ռուբլու չափ գումար, որ նուազ է համեմատելով անցած տարիների տուած արդիւնքների հետ։

◆ Եղանակները այս երրորդ թէ չորրորդ կիրակին է անձրևային ու ցուրտ են լինում։ Այս հանգամանքը ևս նպաստում է ընդհ. ժողովների չը կայանալու վրա։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երգչուհի Մ. Սօլովեաճի կօնցերտը

Մաքուր, հաճելի, փաղաքշող ձայն ունի երգչուհի Մ. Սօլովեանը։ Երգում է զգացմունքով, բաւական պարբերութիւնները և երաժշտական պարբերութիւնները և զատօրէն կարգաւորում է ձայնը բարձր և ստորին աստիճաններում կամ բեգիստրներում։

Երգչուհին ունի իր տրամադրութեան տակ գեղեցիկ հիմնական նիւթ, որը արդէն բաւական մշակված է։

Եւ անշուշտ ցանկալի է, որ նա հնարաւորութիւն ունենար շարունակելու իր ձայնի կատարելագործութիւնը։

Այդ կատարելագործութիւնը պէտք է մի կողմից շարունակի ձայնի մշակման գործը, մէս կողմից տայ երգչուհու ձեռքը տիրողէ բեպերտուար, որով նա կարողանայ հանդէս գալ իբրև երգչուհի մեծ բեմի վրա։

Եղածը յոյս է տալիս լաւ ապագայի։ Ձայնի ճկունութիւնը, որ այժմ արդէն աջող արտայայտութիւն ունի, կը ստանայ աւելի ևս մեծ ընդունակութիւն նիւանսների և նրբութիւնների համար, կը շերտաւորվի տրամադրութիւններ արտայայտելու համար, կը վերացնի առանձին նօտաների դողդոջիւն առողջանութիւնը և քնջութիւն կը տայ ձայնի վերջին. բեգիստրի զիլ և գեղեցիկ, բայց դեռ սուր և շեշտակի ընդգծումներին։

Թէ Զայկօվսկիից և եւրօպական բեպերտուարից վերցված երաժշտական կտորները և թէ հայկական «Ոհ ինչ անուշ» երգը ընդունվեցին բուռն ծափահարութիւններով հանդիսականների կողմից։

Կօնցերտին մասնակցող Շրիդեր Իվանովա բաւական փորձված երգչուհի է և երգում է ինքնավստահութեամբ։ Գլէբօվը սիրող է, երգեց Զայկօվսկիից romance և «Ֆաուստ» օպերայից։ Սևուեան աջողութեամբ արտասանեց գրական կտորներ դաշնամուրի ներդաշնակութեամբ։ Հանդիսականները հաւանեցին Մելիքեանի երաժշտական յօրինուածքը։

Կօնցերտը տեղի ուներ կ. Հ. Բարեգործական Ընկերութեան դահլիճում։ Սիրող

Դալսկին Բելուգինի դերում

Ողբերգու Դալսկին երկրորդ անգամ հանդէս եկաւ Բելուգինի դերում։

Թատրոնը լի էր հանդիսականներով, որոնք լարված ուշադրութեամբ հետևում էին դերասանի տաղանդաւոր խաղին։

Դալսկին գեղեցիկ կերպով ուսումնասիրել է Բելուգինի տիպը և նրան խաղում է մեծ հարազատութեամբ և ինքնաիւրացմամբ։ Բուռն զգացմունքներով արտայայտելով Բելուգինի յոյզերը, մտածված խաղով և բնական շարժումներով պատկերացնելով նրա տիպը, Դալսկին դարձնում է Բելուգինին վերին աստիճանի կենդանի, շօշափելի և տպաւորիչ։

Դալսկին ամեն մի տիպից ստեղծում է ամբողջութիւն և ներկայացրած հերոսին դարձնում է յիրաւի կենտրօնական անձնաւորութիւն։ Նա տալիս է տիպին խոշոր գծեր և գունաւորութիւն։

Ներկայացմանը մասնակցում էր Թիֆլիսում գտնվող դերասան Բարատովը, որը կատարում էր Ագիշինի դերը։ Նա պատկերեց տիպը բնական գծերով, բայց չէր իւրացրել նրանց այն կատարելութեամբ, որ սովոր ենք տեսնել նրա խաղերում։

Վերջին անգամ Դալսկին հանդէս կը գայ «Ուրիէլ Ակոստա» պիէսում։ Սիրող

Ապրիլի 6-ին, Արքունական թատրոնում կը կայանայ մի շատ հետաքրքրական ներկայացում յօգուտ Գայիանեան դպրոցի։ Այդ օրը առաջին անգամ կը ներկայացվի Ա. Ֆրանսի յայտնի «Տաիս» վէպից փոխադրված «Տաիս» անունով 7 պատկերով դրաման՝ մասնակցութեամբ հայ դերասանական խմբի յայտնի ոյժերի։

Ինչպէս յայտնի է, այս տարվայ սեզոնի ընթացքում շատ անգամ ներկայացված «Տաիս» օպերան ունեցաւ մեծ աջողութիւն։ Այժմ Վ. Տ.-Ղ.-ի փոխադրված «Տաիս» դրաման առաւել ևս հետաքրքրական է լինելու այն տեսակէտից, որ Նիւթը վերցված է Քրիստոսի առաջին տարիների գործունէութեան շրջանի անապատականների կեանքից։

Թէ դրամայի նորութիւնը և ներկայացման բարի նպատակը անշուշտ այդ օրը թատրօն կը գրաւեն շատ շատերին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 20 մարտի

Այս տարի լրանում է Ալ. Ծատուրեանի գրական գործունէութեան 25-ամեայ տարեդարձը (1885—1910)։

Այդ առիթով Մոսկվայի հայ հասարակութիւնը միաք է յղացել մի հաւեստ հանդիսով տօնել շնորհալի բանաստեղծի և յաջողակի համաքաղաքացու յօբելեանը։

Տօնախմբութիւնը նշանակված է շաբաթ, ապրիլի 24-ին։

Որպէէ կերպ ժամանակցել ցանկացողները դիմում են յօբելեանական յանձնաժողովի նախագահին հետևեալ հասցէով՝ Сухаревская пл., д. Канановой, К. Кусикяну.

Ցանձնաժողովի անդամներ՝

Բժ. Մ. Աբաղեան, Գ. Բուրջալեան, Բ. Գէորգեան, Ս. Դուլղարեան, Յ. Խաչատրեան, Կ. Կուսիկեան, Ս. Մամիկոնեան, Կ. Միքայէլեան, Ա. Շորշորեան, Ա. Տէր-Մկրտչեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 22 մարտի

Այս տարի օդերևութաբանական արտակարգ երեւոյթներ են հանդէս գալիս մեր երկրում։ Ատրպատականում։ Մինչև յունվարի վերջերը աշնանային մեղմ եղանակ. փետրվար ամսի սկզբից նոր ձմեռ, խիստ ցրտեր ու ձիւն. մարտի առաջին օրերից սկսվեց գարնանային եղանակ, այնպէս որ ծառերը, աւելի նշենիները, սկսեցին ծաղկել և մարդիկ ձմեռվայ տանմանիքից ու տնտեսական բազմապիսի տագնապներից պրծած կարծեցին... Պատրանք։ Նախընթաց գիշերվանից օդը ցրտեց ու նորից սկսեց անտանելի բուք-բորանը, որ դեռ շարունակում է։ Կէս արշինից աւելի ձիւն է նստել, միաժամանակ փչելով ցուրտ քամին։ Նշենիների ծաղիկները փչացած կը լինեն անշուշտ. տառնամանիքը ինչ չափով ազդում է միւս պտղատու ծառերին՝ յայտնի չէ։ Դեռ այս բաւական չէ։ Կէսգիշերը անց՝ բուքի ու ձիւնի եռանդուն սկսվելու պահին, խոր քնի մէջ, լսվեց ստորերկրեայ զօրեղ որոտում, որին յաջորդեց հիւսիսից հարաւ ուղղուած ուժգին երկրաշարժ։ Հարաւում մի տատանում, որը բարեբաղդաբար երեք վայրկեանից աւելի չը տևեց։

Պօստերի քննիչ Ֆրանսիացի Դէվիլի մեկնելուց յետոյ պօստային վարչութեան մէջ տիրում է քաոսային դրութիւն։ Հրաժարեցված և Դէվիլից չընդունված Բէշիր Մամալիքը, նախկին տեսուչ Մարգար Մանսուրի (մինիստրի) հրամանագիրը ձեռքին, պահանջում է իր նախկին պաշտօնը ու նստել է արգէն. երկու տեսչական փոխանորդները մերժում են ընդունել նրան. և այսպէս խայտառակ կատակերգութիւններ։ Ի զուր է, Պարսկաստանը ձեռք չէ քաշում իր դարաւոր յոռի սովորութիւններից։

Եփրեմի և սարդար Բահատուրը շուտով գնալու են Թէհրան. սպասում են դրամի՝ Թէհրանից։ Պէտք է խոստովանել, որ Թաւրիզի բոլոր գիտակից պարսիկները հիացմամբ են խօսում Եփրեմի տակտիկայի, անկեղծութեան և առհասարակ նրա ձեռք առած խելացի ուղղութեան մասին դէպի ամենայն մի գործ՝ զինուորական թէ քաղաքական։ Թաւրիզում նրա թողած տպաւորութիւնը միանգամայն հիանալի է։ Հ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօսաստար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդաստար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։

Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօսաստար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդաստար ապրանքի՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպոլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդաստար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօսային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդաստար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒՄԻՑ՝ պօսաստար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդաստար № 5 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաքում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդաստար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօսային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդաստար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօսաստար 6 ժամ 19 ր. առ., մարդաստար-ապրանքաստար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺԻՇԿ

Ա. ՄԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վենեռական և կաշու հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը
առաւօտեան ժ. 12½—2.
ամեն օր երեկոյեան ժ. 5—7.

Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլոլակ, Բէհրութեան փ., № 33.
(օ. մ.) 1044. 100—97

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐԲԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.

Միքայէլեան փող., № 36. Տելեֆոն № 388
(օ. մ.) 1216. 100—96

ՄԵԳԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վերբերեալ [illegible] (внутренние) հայլն։ Էլեֆտրականութիւն բժշկական նպատակներով, սեռական անկարողութեան և մի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մանուալը և ընդհանուր մասաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Որոնուրդը 50 կօպ.։ Ընդունելութիւնը՝ կանանց—3—3½ ժ., տղամարդանց—3½—4½ ժ.։ Семеновская ул., № 9.
(կ. հ.) 77. 50—19

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԻՄՈՒՄՆ

Սրանով խնդրում եմ նրանց, որոնք որևէ տեղեկութիւն ունեն իմ ընկեր՝ Կարեգինի գաւառացի՝ ըմբիշ և տալէտ ՍԱՄՍՈՆ ՏԷՐ-ՕՀԱՆԵԱՆի մասին և գիտեն նրա ուր լինելը, թող նեղութիւն կրեն հաղորդել ինձ հետևեալ հասցէով. ХАРЬКОВЪ. Борецъ САНДОРФЪ. До востребованія.

Ցարգանքով՝ ըմբիշ ՍԱՆԴՈՐՖ
366. 1—1

Հրատարակութիւն Գ. Դալուստեանի, № 44.
Լոյս տեսաւ
Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ Ա.
(Թարգմանութիւններ և ինքնուրոյն աշխատութիւններ)

Բովանդակութիւն.
1) «Թանգագին համբոյր», վոդ. 1 գործ.
2) «Ցանկալին և անսպասելին», Բիշկովից թարգմանած։
3) «Լուսանկարչական պատուասա», կատակ 1 արարուածով։
4) «Բարեգօնեան խառնակութիւն», կատակերգութիւն 1 արար., փոխադրութիւն։
5) «Աւետիս աղա», կամ «Բազուենթալում պօսային կայարանը», վոդ.-էսքիզ 1 գործ.
6) «Շփոթված ծառայ», վոդեվիլ 1 արար. փոխադրութիւն։

Գինն է պօսի ծախքով 1 ռուբ.

Դիմել՝ Книгоиздательство и книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустянъ въ Тифлисѣ.
(հ. շ.) 365. 2—1

ԳԼԽԱՒՈՐ
200,000 ՌՈՒԲԼԻ ՏԱՐԱԾ ԳՈՒՄԱՐԸ

Մասնակցեցէք Պետական խաղարկու տոմսերի Ցմկական. III փոխառ. տիրաժին, որ տեղի կունենայ առ ... Ջիկայ մայիսի 1-ին ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԵՏԵՐԱՆ ԲԱՆԿՈՒՄ։ Դուք հնարաւորութիւն ունեք փորձելու ձեր բաղդը՝ ... ռանց խոշոր ծախքերի։ Ուղարկեք շուտով ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՌՈՒԲԼԻ և դուք իրաւունք կը ստանաք մասնակցելու ... տական խաղարկու տոմսերի III փոխառ. տարած գումարի $^{1}/_{50}$ մասին։ Ծախված փողը անմնան է, հետաքրքրվեցեք ... ամեն մէկը պէտք է օգտվէ այդ հազուագիւտ-ձեռնտու դէպքից։ Ձեր վճարը ստանալուն պէս կուղարկվի ձեզ պատշաճ վկայագիր, որի վրա նշանակված կը լինեն տոմսի և սերիայի համարները։ Գաղտնիքները հասցէագրեցեք՝ КОНТОРЪ Ш. ФРЕНЗЕЛЬ, ВАРШАВА, ПАНСКАЯ 26. Հեռագրի հասցէն՝ ВАРШАВА, ФРЕНЗБАНКЪ.

Վճարը $^{1}/_{25}$ մասի համար 4 ր., $^{1}/_{20}$-ինը—5 ր., $^{1}/_{10}$-ինը—10 ր.։ Բոլոր խաղացված տոմսերի ... կը տպվի թէ «Մշակի» և թէ մայրաքաղաքի և գաւառական այլ լրագիրներում։
(1,6,11,16,22) (B.25089) 358. 5—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.